ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01/23.13/[44582]-10
«Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ – Հայաստանե ՊՈԱԿ-ի
կառավարման խորհրդի 2010 թվականի հուլիսի 13-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

քաղ. Երևան

Մասնակցում էին

Տ. Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Ս. Գալստյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Ա. Անդրեասյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Ա. Անանյան	ՀՀ վարչապետի օգնական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսա-գիտական վարչության պետի տեղակալ
Ս. Ոսկանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսա-գիտական վարչության փորձագետ
Ա. Հովսեփյան	«Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ – Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Ն. Մարտիրոսյան	«Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ – Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր իրավախորհրդատու
Մ. Հիրնիակ	«Հազարամյակի մարտահրավերե կորպորացիայի հայաս-տանյան ներկայացուցչի տեղակալ
Ա. Ոսկանյան	Տավուշի զարգացման ՀԿ-ի ներկայացուցիչ
Շ. Միքայելյան	«Աշխատանք և հայրենիքե ՀԿ-ի ներկայացուցիչ
Վ. Ենգիբարյան	«Հայաստանի եվրոպական շարժումե ՀԿ-ի ներկայացուցիչ

Կ. Զադոյան	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիաե ՀԿ-ի ներկայացուցիչ
Տ. Բաղդասարյան	թարգմանիչ

Բացակայում էին՝

Վ. Ներսիսյանց	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ն. Երիցյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գ. Ալավերդյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Պ. Շահինյան	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդե ՀԿ-ի ներկայացուցիչ
Ռ. Խաչատրյան	բնապահպանական դիտորդ

1. «Հազարամյակի մարտահրավերե Հիմնադրամ–Հայաստանե ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում (Փաթեթ II)ե Լոտ 1 և Լոտ 3 պայմանագրերի նախագծերի քննարկում և հաստատում

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերե Հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը և նշեց, որ «Հազարամյակի մարտահրավերե Հիմնադրամ–Հայաստանե ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում նախատեսված Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման (Փաթեթ II, երեք լոտ), մրցույթի արդյունքները քննարկվել և հաստատվել են Կառավարման խորհրդի կողմից՝ 2010 թվականի հունիսի 9-ին։ Լոտ 2-ի համար հաղթող ճանաչված՝ «Սպիտակ-1ե ԲԲԸ-ի հետ պայմանագիրը կնքվել է 2010 թվականի հունիսի 24-ին՝ 2,320,631,649.79 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որը համարժեք է 6,034,825.11 ԱՄՆ-ի դոլարին։ Լոտ 1 և լոտ 3-ի համար հաղթող էր ճանաչվել «Քորթիիլ Կորպորացիա հայաստանյան մասնաճյուղե ընկերությունը՝ 4,733,862.69 ԱՄՆ-ի դոլար և

4,535,710.56 ԱՄՆ-ի դոլար համապատասխան արժեքներով: Ընկերությունը ծանուցվել է հաղթող ճանաչվելու մասին և տեղի են ունեցել պայմանագրային բանակցություններ, որի վերաբերյալ կազմվել և ստորագրվել է համապատասխան արձանագրություն :

2010 թվականի հունիսի 15-ին «Քորթհիլ Կորպորացիա հայաստանյան մասնաճյուղ» ընկերությունն պաշտոնապես հրաժարվել է Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում (Փաթեթ II), լոտ 1 և 3 պայմանագրերից՝ պատճառաբանելով ծրագրի համար պատասխանատու անձի անորոշ ժամանակով մեկնելու անհրաժեշտությամբ: Ընդ որում, դրա մասին տեղեկացվել է ՀՄԿ-ին և «Հազարամյակի մարտահրավերը Հիմնադրամ–Հայաստան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահին, որից հետո, համաձայն գործող գնումների ընթացակարգի, ուսումնասիրվել և անդրադարձվել է մրցութային փաստաթղթերի պահանջներին համապատասխանող և նվազագույն գին առաջարկած հաջորդ տեղում գտնվող՝ «Զարուբեժվոդստրոյ» ԲԲԸ-ին: Ընկերության և ՀՄՀ-Հայաստանի ներկայացուցիչների միջև 2010 թվականի հունիսի 22-24-ը «Հազարամյակի մարտահրավերը Հիմնադրամ–Հայաստան» ՊՈԱԿ-ի գրասենյակում տեղի են ունեցել բանակցություններ, որի ընթացքում ընկերությանն առաջադրվել է աշխատանքների կատարման պայմանագրային արժեքի նախատեսված 10 տոկոսի փոխարեն 50 տոկոսի չափով երաշխիքի տրամադրման պահանջ: Ընդ որում, նա նկատեց, որ համաձայն տրված հանձնարարականի խստացվել են կապալառու կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերի պահանջները:

Ընդ որում, երաշխիքների տրամադրումն իրականացվելու է երկու փուլով՝ 10 տոկոս երաշխիքը կտրամադրվի մրցութային փաստաթղթերի պահանջներին համապատասխան, պայմանագիրը կնքելուց հետո 28 օրվա ընթացքում, իսկ 40 տոկոսը՝ 45 օրվա ընթացքում՝ համաձայն պայմանագրում ամրագրված դրույթների: Լոտ 1-ի պայմանագրի արժեքը կազմել է 5,763,670.41 ԱՄՆ-ի դոլար և Լոտ 3-ի պայմանագրի արժեքը կազմել է 4,993,210.33 ԱՄՆ-ի դոլար:

Աշխատանքները կիրականացվեն կապալառու ընկերության կողմից տրամադրված և «Հազարամյակի մարտահրավերը Հիմնադրամ–Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից հաստատված աշխատանքային պլանի համաձայն:

Շինարարական աշխատանքների տևողությունն է մինչև 2011 թվականի հուլիսի 31-ը: Վճարումները կիրականացվեն փաստացի կատարված շինարարության ծավալների հիման վրա՝ հիմք ընդունելով մրցույթի ընթացքում կապալառու կազմակերպության կողմից ներկայացված աշխատանքների և նյութերի միավոր գները: Փաստացի կատարված աշխատանքները կընդունվեն շինարարական աշխատանքները վերահսկող կազմա-

կերպության կողմից: Կապալառու կազմակերպությանը կվճարվի կանխավճար՝ պայմանագրերի պայմանական արժեքի 15 տոկոսի չափով, և յուրաքանչյուր վճարումից կպահվի գումար՝ վճարվող գումարի 10 տոկոսի չափով, իսկ ամբողջ աշխատանքների ավարտից հետո կվճարվի պահված ամբողջ գումարի կեսը, իսկ մյուս կեսը՝ թերությունների վերացման ժամկետի (12 ամիս) ավարտից հետո:

Անդրադառնալով շահառու համայնքների՝ ծրագրի մասնակցությունից հրաժարվելու հավանականության հարցին՝ «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը նշեց, որ ներկայումս նման ռիսկայնությունն առկա է:

Ինչ վերաբերում է 15 տոկոս համաֆինանսավորման գումարի վճարմանը, ապա, ինչպես նշեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը, այդ հարցի կապակցությամբ տեղի է ունեցել քննարկում ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի հետ, որի արդյունքում որոշվել է 15 տոկոս համաֆինանսավորման գումարի առնվազն կեսի վճարման համար պայմանականորեն սահմանել մեկ ամիս ժամկետ: Դրանից բացի առկա է նաև համաֆինանսավորում ապահովող համայնքների պայմանական ցանկ, որոնք ծրագրում դեռևս ներգրավված չեն, սակայն պաշտոնապես պատրաստակամություն են հայտնել ներգրավվել ծրագրի մեջ՝ երաշխավորելով համաֆինանսավորման համար պահանջվող ֆինանսական միջոցների առկայությունը: Ուստի, որոշ համայնքների հրաժարման և ծրագրից դուրս գալու կամ գումարների ավելցուկի դեպքում՝

1) այն համայնքները, որոնք պատրաստ կլինեն համաֆինանսավորման և ներկայացված նախագծային աշխատանքները կհամապատասխանեն, ապա կներգրավվեն ծրագրում.

2) կուղղվեն այլ ենթակառուցվածքների, օրինակ՝ մայր ջրանցքներում երեսապատման կամ առկա ինքնահոս համակարգերի վերջնամասերի ավարտման աշխատանքների կատարմանը (կրկին կառավարման խորհրդի և ՀՄԿ-ի հավանությամբ):

Դրանից բացի՝ նա նկատեց, որ համայնքները ֆինանսական աղբյուրների ներգրավման հարցում բացարձակ ազատ են, ինչը ենթադրում է ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ:

Այնուհետև նա նշեց, որ մինչև ծրագրի ավարտը կպահանջվի մոտավորապես 2.0 մլն ԱՄՆ-ի դոլար, որը կբաշխվի 90 համայնքի միջև:

Այդ կապակցությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանը հաստատեց, որ տվյալ ենթածրագրի բաղադրիչով առկա է 15 տոկոս համաֆինանսավորման պահանջ, այսինքն՝ ՋՕԸ-երը 3-րդ կարգի ջրանցքներ կառուցվող համապատասխան համայնքների մասով ունենալու են 15 տոկոսի չափով մասնակցություն: Ուստի, հայտնեց իր մտահոգությունը գնային տարբերությունների կապակցությամբ, մասնավորապես նշելով, որ վերջինս կարող է խթանել շահառու համայնքների՝ ծրագրի մասնակցությունից հրաժարվելուն:

Այնուհետև նա առաջարկեց, ձևավորել համայնքների պահուստային ցուցակ, որոնք համաֆինանսավորման առկայության պարագայում կփոխարինեն այն համայնքներին, որոնք կհրաժարվեն ծրագրի մասնակցությունից:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ս. Գալստյանն առաջարկեց սեղմ ժամկետներում ուսումնասիրել համայնքների կողմից կատարվելիք համաֆինանսավարման ծավալները, որից հետո միայն կայացնել համապատասխան որոշումներ:

«Հազարամյակի մարտահրավերե կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչի տեղակալ Մ. Հիրնիակը նշեց, որ ՀՄԿ-ի կողմից դեռևս պայմանագիրը չի հաստատվել, քանի որ դեռևս դիտարկվում են նախագծերում ներկայացված ինժեներական և տեխնիկական լուծումները: Ինչ վերաբերում է 15 տոկոս համաֆինանսավորմանը, ապա նա նկատեց, որ որոշ համայնքներում այդ գումարը հասնում է 550.0 հազ. ԱՄՆ-ի դոլարի , իսկ որոշներում՝ մինչև մեկ մլն ԱՄՆ-ի դոլարի: Ուստի, ներկայումս ՀՄԿ-ն փորձում է հասկանալ կիրառված լուծումները ու կատարված հաշվարկների հիմնավորվածությունը, ինչպես նաև այն փաստը, թե ինչու նախագծային ընկերության կողմից հաշվի չեն առնվել ՀՄԿ-ի և վերջինիս միջազգային տեխնիկական խորհրդատուի առաջարկներն ու խորհուրդները:

Նա հայտնեց ՀՄԿ-ի շահագրգռվածությունը պայմանագրի վաղ հաստատման գործում, որպեսզի համայնքները հնարավորություն ունենան ստանալու համապատասխան աջակցություն: Սակայն միևնույն ժամանակ անհրաժեշտ համարեց, որպեսզի «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ը հնարավորինս արագ շտկի առկա խնդիրները և իրականացնի աշխատանքները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը նշեց, որ հիմնական խնդիրը համայնքային բյուջեում առկա միջոցների սղությունը, որի պատճառով մի շարք համայնքներ դուս են մնացել ծրագրից: Ընդ որում, ներկայումս ճշգրտվում է համայնքների ցանկը:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց հաստատել «Հազարամյակի մարտահրավերե Հիմնադրամ–Հայաստանե ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում (Փաթեթ II)ե Լոտ 1 և Լոտ 3 պայմանագրերի նախագծերը, իսկ հետագայում՝ որոշ համայնքների կողմից համաֆինանսավորման գումարը տրամադրելուց հրաժարվելու դեպքում կրկին անդրադառնալ խնդրին:

Դրանից բացի ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ այնուամենայնիվ խնդրո առարկա է հանդիսանում նախագծային ինստիտուտների կարողությունների միջազգային չափանիշներին համապատասխանեցումը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավերե Հիմնադրամ–Հայաստանե ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում (Փաթեթ II)ե Լոտ 1 և Լոտ 3 պայմանագրերի նախագծերը:

2. ՀՄԿ-ին ներկայացվող Արտահերթ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում՝
   ա) արտահերթ հատկացման հայտ և եռամյակային ֆինանսական հաշվետվություն,
   բ) ամփոփ հաշվետվություն

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերե Հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը և նշեց, որ հատկացումների արտահերթ հայտով «Հազարամյակի մարտահրավերե Հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ը պլանավորում է ընթացիկ եռամյակի (2010 թվականի հուլիս – սեպտեմբեր ամիսներ) համար ՀՄԿ-ից ընդհանուր վճարային համակարգի միջոցով ստանալ լրացուցիչ ֆինանսավորում 206,767 ԱՄՆ-ի դոլարի չափով: Այսպիսով ընթացիկ եռամյակի համար հատկացումների 16-րդ հայտով հաստատված և պահանջվող լրացուցիչ ֆինանսավորման ընդհանուր գումարը կկազմի 25,253,712 ԱՄՆ-ի դոլար, որն էլ ըստ ՀՄԿ ուղեցույցի ներկայացված է տվյալ արտահերթ հայտով:

Լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությունն առաջացել է «Հազարամյակի մարտահրավերե Հիմնադրամ–Հայաստանե ծրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի վարկային գործունեության շարունակական ֆինանսավորման ապահովման համար: Վարկային

ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 8.5 մլն ԱՄՆ-ի դոլար, որի տեղաբաշխումը նախատեսված էր ավարտել մինչև 2010 թվականի հունիս ամսվա վերջը: Այդ պատճառով Կառավարման խորհրդի 2010 թվականի հունիսի 9-ի նիստին ներկայացված և ընդունված ՀՄԿ 16-րդ հատկացման հայտում վարկային գործունեության համար այս եռամսյակի համար գումար չէր նախատեսվել: Մինչև 2010 թվականի հունիսամսվա վերջը փաստացի տեղաբաշխման ընդհանուր գումարը կազմել է 8,293,233 ԱՄՆ-ի դոլար: Այսպիսով, իրականացնելով մնացորդային 206,767 ԱՄՆ-ի դոլարի տեղաբաշխումը, «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ը կավարտի ծրագրով նախատեսված մայր գումարի տեղաբաշխումը և վարկային կազմակերպություններն այդ պահից ի վեր կշարունակեն ծրագրի վարկային գործունեությունը վարկառուների կողմից վերադարձված գումարների հաշվին:

Ընդ որում, նա նշեց, որ ընդհանուր առմամբ հաստատվել են 801 վարկային հայտեր, որից 754-ն արդեն ֆինանսավորվել են: Ներկա պահին տրամադրված վարկերի ընդհանուր գումարը կազմում է 8.293,233 ԱՄՆ-ի դոլար: Վերահսկողությունն իրականացվում է երկաստիճան եղանակով՝ ՀՀ ֆինանսների նախարարության Գյուղական ֆինանսավորման կառույց ԾԻԳ-ի և «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի միջոցով:

Քննարկումներից հետո որոշվեց հաստատել՝

1) արտահերթ հատկացման հայտը և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը.

2) ամփոփ հաշվետվությունը:

3. «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում վերականգնվող Ռանչպար 1 պոմպակայանում շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ վերաբնակեցման գործողությունների պլանի քննարկում և հաստատում

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը և նշեց, որ «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի շրջանակներում

վերականգնվող Ռանչպարի առաջին աստիճանի պոմպակայանի վերականգնման համար ՀՄՀ-Հայաստանի Բնապահպանական և սոցիալական գնահատման և վերահսկողության խորհրդատու կազմակերպությունը մշակել է Վերաբնակեցման գործողությունների պլան՝ համաձայն

ՀՄԿ-ի կողմից ընդունված՝ Համաշխարհային բանկի վերաբնակեցման վերաբերյալ գործառնական քաղաքականության։Վերաբնակեցման գործողությունների պլանով նախատեսվում է ՀՀ Արարատի մարզի Հովտաշատ համայնքի 0.1348 հա հողատարածքի օտարում, որի համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախատեսվում է հատկացնել է 287000 ՀՀ դրամ։

Քննարկումներից հետո որոշվեց հաստատել «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում վերականգնվող Ռանչպար 1 պոմպակայանում շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ վերաբնակեցման գործողությունների պլանը։

4. «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի փակման պլանի քննարկում և հաստատում

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը և նշեց, որ 2009 թվականի սեպտեմբերի 8-ին ՀՄԿ-ն հաստատել է «Հազարամյակի մարտահրավերե կորպորացիայի կողմից ֆինանսավորվող ծրագրերի փակման ուղեցույցը։

Սակայն «Հազարամյակի մարտահրավերե կորպորացիայի կողմից ծրագրի փակման պլանի վերաբերյալ բարձրացվել են մի շարք հարցեր, որոնց պարզաբանումն ու լուծումը «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի իրավասություններից դուրս է։ Ուստի, ելնելով այն հանգամանքից, որ մինչև 2010 թվականի սեպտեմբեր ամսվա վերջ պետք է հաստատված լինի ծրագրերի փակման պլանը, նա ներկայացրեց հետևյալ առանցքային հարցերը՝

1) «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գործունեությունը 2012 թվականի հունվար ամսից հետո (շարունակելու է արդյոք ՊՈԱԿ-ն իր գործու-

նեությունը, որ աղբյուրից է ֆինանսավորվելու, ինչ գործառույթներ է իրականացնելու, բացի նրանցից, որոնք հանդիսանում են ՀՄՀ-Հայաստան ծրագրի տրամաբանական շարունակությունը).

2) «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի լուծարման պարագայում ծրագրով նախատեսված գործառույթների հետագա իրականացում (որ մարմինը կամ մարմիններն են իրականացնելու շինարարության վերահսկողությունը և հնարավոր հետագա վճարումները կամ գումարների հետկանչը, վերահսկելու վարկային բաղադրիչի իրականացումը, ծրագրի արդյունքների և ազդեցության մոնիթորինգը).

3) Ոռոգման ծրագրի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողի գործունեության հետագա հնարավոր շարունակում և ֆինանսավորում (անհրաժեշտ է արդյոք շինարարության տեխնիկական վերահսկողի պայմանագիրը երկարաձգել մինչև թերությունների վերացման ժամկետի վերջը, ինչ աղբյուրներից է ֆինանսավորվելու, որ մարմնի ենթակայության տակ է գտնվելու).

4) ծրագրի շրջանակներում ձևավորված ակտիվներ (որ կառույցին պետք է փոխանցի «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գույքը, ինչ ծավալներով և ինչ հիմնավորմամբ).

5) վարկային բաղադրիչի շրջանակներում առկա 8.5 մլն ԱՄՆ-ի դոլարի տնօրինում 2015 թվականի մարտ ամսից հետո (որ կառույցին պետք է փոխանցվի, ինչ նպատակների համար է ենթակա կիրառման).

6) ծրագրի շրջանակներում առկա փաստաթղթերի (նախագծերի) հանձնում (որ մարմնին է հանձնվելու)։

Ինչ վերաբերում է «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի աշխատակազմին, ապա «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը նշեց, որ մինչև 2011 թվականի սեպտեմբեր ամսվա վերջ թվաքանակը (ներկա պահին 37 աշխատող՝ մինջինը 500.0-600.0 հազ. դրամ աշխատավարձով) կմնա անփոփոխ, իսկ պաշտոնական ավարտից հետո՝ 3-4 ամսվա ընթացքում այն կկրճատվի մոտավորապես 2-3 անգամ։ Ընդ որում, «Հազարամյակի մարտահրավերե կորպորացիային ներկայացնելիս փակման պլանում, ըստ առանձին ոլորտների, անհրաժեշտ է նշել հիմնավորված մեկնաբանություն լիազորությունների ու իրավասությունների իրավահաջորդության մասին։

Ինչ վերաբերում է ճանապարհաշինարարության ոլորտում առկա (ներկա պահին չի վճարվել 10 տոկոսի չափով գումար՝ 543.0 մլն դրամից վճարվել է 273.0 մլն դրամը)

ֆինանսական պարտավորությունների չկատարմանը, ապա նա նկատեց, որ վճարումները կատարվել են առկա գումարների չափով, իսկ մնացյալ մասը չի վճարվել ֆինանսական միջոցների սպառման պատճառով:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանը նշեց, որ դեռևս մեկ ամիս առաջ, համապատասխան զեկուցագրով ներկայացվել էր ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում մեկնարկած ճանապարհաշինարարության աշխատանքներն ավարտին չհասցնելու և համապատասխան վճարումները (ներկա պահին չի վճարվել 5 տոկոսի չափով գումար՝ մոտավորապես 283.8 մլն դրամ) ոչ լիարժեք կատարելու մասին տեղեկատվություն:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գործունեության դադարից հետո (2012 թվականի հունվարի 1-ից), պայմանագրային պարտավորությունների, ֆինանսական ակտիվների, այդ թվում՝ նաև վերադարձման ենթակա ակտիվների մասով, իրավահաջորդ ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության Արտասահմանյան ֆինանսական ծրագրեի կառավարման կենտրոն ԾԻԳ-ը՝ առաջնորդվելով ճանապարհաշինարարության ոլորտում կիրառված փորձով: Նման պարագայում ՀՀ ֆինանսների նախարարության Արտասահմանյան ֆինանսական ծրագրեի կառավարման կենտրոն ԾԻԳ-ն ինքնուրույնաբար, ելնելով կատարվելիք աշխատանքների ծավալներից, կընտրի համապատասխան թվով աշխատողներ:

Անդրադառնալով իրավահաջորդության հիմնավորված մեկնաբանությանը՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ յուրաքանչյուր ոլորտում պատասխանատու կհանդիսանա տվյալ ոլորտի շահագործողը (օրինակ՝ ճանապարհների մասով պատասխանատու կհանդիսանա ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ջրագծերի կամ մայր ջրանցքների մասով՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն), իսկ վերահսկողությունը կիրականացվի ՀՀ ֆինանս-ների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրեի կառավարման կենտրոնե ԾԻԳ-ը:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի փակման պլանը.

2) հանձնարարել «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանի հետ համատեղ «Հազարամյակի մարտահրավերե կորպորացիային հանդես

գալ գրավոր նամակով (կից ներկայացնել նաև հիմնավորված եզրակացություն)՝ առաջարկելով քննարկման առարկա դարձնել ճանապարհաշինության ոլորտում 5 տոկոսի՝ մոտավորապես 283.8 մլն դրամին համարժեք ԱՄՆ-ի դոլարի չափով գումարների փոխհատուցման հարցը.

3) «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գործունեության դադարից (2012 թվականի հունվարի 1-ից) հետո, պայմանագրային պարտավորությունների, ֆինանսական ակտիվների, այդ թվում՝ նաև վերադարձման ենթակա ակտիվների մասով, իրավահաջորդ ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ԾԻԳ-ը։

5. «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի շահառուների խորհրդի ընտրության արդյունքների քննարկում և հաստատում

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը և նշեց, որ ըստ էության «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի շահառուների խորհրդի ընտրությունները համարվում են կայացած։

«Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր իրավախորհրդատու Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ ընտրությունների արդյունքում հանձնաժողովի անդամներից մի քանիսի կողմից բարձրացվել է 2 խնդիր, մասնավորապես, Գաբրիել Բալայանի կողմից թեկնածության հայտի ներկայացման ժամկետի խախտման (հայտի ներկայացման վերջնաժամկետը սահմանված էր մայիսի 12-ը, սակայն հայտը ներկայացվել էր մայիսի 13-ին) մասով։ Ըստ գործող ընթացակարգի տվյալ հայտը պետք է մերժվեր, սակայն Գաբրիել Բալայանի կողմից ներկայացված հիմնավորմամբ հայտն ընդունվել էր։ Ուստի, ընտրական հանձնաժողովի անդամների փոքրամասնության պնդմամբ տեղի է ունեցել խախտում, քանի որ հայտը ենթակա էր մերժման։ Երկրորդ խնդիրը, որ առկա էթ դա ընտրական հանձնաժողովի անդամների փոքրամասնության պնդմամբ առկա էր շահերի բախում, մասնավորապես, ընտրող և ընտրվող կազմակերպությունների ներկայացուցիչների մասով։ Այսինքն, մեկ անձը միաժամանակ ներկայացնում էր մի քանի ՀԿ։ Բացի դրանից՝ որպես շահերի բախում էր դիտվում նաև այն փաստը, որ ընտրական

հանձնաժողովի անդամներից մեկի թեկնածուներից մեկի միջև առկա էր ազգակցական կապ։ Չնայած ներկայացված խնդիրներին, այնուամենայնիվ ընտրությունները կայացան, սակայն ընտրական հանձնաժողովի փոքրամասնության ներկայացուցիչները հանդես եկան բացառապես որպես դիտորդ և չստորագրեցին քվեաթերթիկներն ու արձանագրությունները՝ ուղղելով գրավոր նամակներ ԱՄՆ-ի դեսպանին, ՀՀ վարչապետին, ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին։

Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի շահառուների խորհրդի ընտրության արդյունքները և հաստատել «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի շահառուների խորհրդի՝ կառավարման խորհուրդ պատվիրակների ցանկը։

6. ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի շրջանակներում տրամադրվող ֆինանսավորման կայունությունն ապահովելու հարցի քննարկում

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը և նշեց, որ 2007 թվականի հունվարի 8-ին «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ-Հայաստանե ՊՈԱԿ-ն Իրականացման պայմանագիր է կնքել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ՝ վերջինիս կողմից անցկացվող ամենամյա տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքները ՀՄՀ-Հայաստան ծրագրի մոնիթորինգի և ազդեցության գնահատման համար օգտագործելու նպատակով։ «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ-Հայաստանե ՊՈԱԿ-ի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության միջև կնքված պայմանագրի շրջանակներում մեծացվել է հետազոտության ընտրանքը՝ 2006 թվականի 5184 տնային տնտեսությունների թիվը հասցվելով 7872-ի, որը հիմնականում կատարվել է գյուղական տնային տնտեսությունների հաշվին։ Ուստի, ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2011 թվականի 4-րդ եռամսյակում հետազոտությունը նույն մակարդակում պահելու նպատակով անհրաժեշտ է 25.5 մլն ՀՀ դրամի չափով գումար։

Քննարկումներից հետո որոշվեց մերժել ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը ՀՀ պետական բյուջեի միջոցներից 2011 թվականի 4-րդ եռամսյակում հետազոտությունը նույն մակարդակում պահելու նպատակով հավելյալ է 25.5 մլն ՀՀ դրամի չափով գումարի տրամադրման առաջարկը:

7. «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի շրջանակներում մշակվող Ռոռգման ռազամավարության մշակման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում և քննարկում

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 7-րդ հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը և նշեց, որ «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի (որպես պատվիրատու) և «ԱՎԱԳ Սոլյուշնսե ՍՊԸ-ի (որպես խորհրդատու) միջև 2010 թվականի մայիսի 7-ին ստորագրված պայմանագրի համաձայն պետք է մշակվի Ռոռգման ոլորտի ազգային քաղաքականության հայեցակարգին համապատասխան ռազմավարություն: Արդյունքում ակնկալվում է առանձնացված հինգ ուղղությունների գծով առաջարկությունների փաթեթ և գործողությունների իրականացման ծրագրերի մշակում (անհրաժեշտության դեպքում): Ընդ որում՝

1) նշված փաստաթղթի առաջին ամբողջական նախագիծը խորհրդատուի կողմից կներկայացվի շահագրգիռ կողմերի քննարկմանը՝ 2010 թվականի հուլիսի 22-ին.

2) շահագրգիռ կողմերի հանդիպում՝ 2010 թվականի օգոստոս ամսվա առաջին շաբաթվա ընթացքում, որի ընթացքում կընդունվեն ռազմավարության հիմնական ուղղությունները, ինչպես նաև կնախանշվեն օրենսդրական փոփոխություններ պահանջող դրույթները.

3) օրենսդրական փոփոխությունների փաթեթի նախագիծը խորհրդատուի կողմից կներկայացվի «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի և կառավարման խորհրդի հավանությանը՝ 2010 թվականի սեպտեմբեր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում, որից հետո փաթեթը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարություն:

Այդ կապակցությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանը տեղեկացրեց, որ Ռոգման ռազամավարությունը հարկային, բյուջետավորման, սուբսիդավորման քաղաքականության և ֆեդերացիաների ստեղծման մասերով գտնվում են մշակման փուլում: Նախատեսվում է 2010 թվականի հուլիսի 22-ին առաջին հաշվետվության ներկայացում, որի արդյունքները նույնպես կներկայացվեն:

Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի զեկուցումները «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի շրջանակներում մշակվող Ռոգման ռազամավարության մշակման ընթացքի վերաբերյալ:

8. «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի մոնիթորինգի և գնահատման պլանի ներկայացում

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 8-րդ հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը:

Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանի զեկուցումը «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի մոնիթորինգի և գնահատման պլանի մասին:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

Հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝ «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ-Հայաստանե ՊՈԱԿ-ի կեղծիքի և կոռուպցիայի կանխման, բացահայտման և վերացման հանձնաժողովի կազմում ընդգրկել նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ